ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ 1, հեռ.՝ (060) 536-429

«Շինաշխարհ» ՍՊԸ-ի
ՏՆՕՐԵՆ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի Ա. Մանուկյան

Աբովյանի համայնքապետարանի(այսուհետ՝ Պատվիրատու) և «Շինաշխարհ» ՍՊԸ-ի(այսուհետ՝ Ընկերություն) միջև 05.08.2022 թվականին կնքվել է «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/25-1» ծածկագրով շինարարական աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Առինջ բնակավայրի Ա թաղամասի 4-րդ, 5-րդ և 6-րդ փողոցների ջրահեռացման համակարգերի անցկացման շինարարական աշխատանքները»:

Կապալառուն «ԱԲՀ-ԳՀԱՇՁԲ-22/25-1» պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում չի կատարել պայմանագրի N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շինարարական աշխատանքները:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե՝

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթներով՝ Պայմանագիրը միակողմանի լուծվել է Պատվիրատուի կողմից:

Հայտնում ենք, որ Ընկերության տվյալները «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ սահմանված գումարները Աբովյանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Գ. Զարոյան

09.11.2022 թ.